Այլ մեք դառնանք դարձեալ առ Ս. Խաչ (Սուրբ-աթ)։ ԺԴ դարուն երկրորդ կիսուն մէջ այս քաղաքը իւր հին հայահնչիւն անունը կը փոխէ և կը լինի Քըռըմ կամ Խրրըմ։ Գիտնոց մօտ քար գայթակղութեան եղած է այս անունը, և ցայսօր ոչ ոք չէ կարողացած գոհացուցիչ մի մեկնութիւն տալ։ Այս պարզ և համառօտ անուանց մեկնութիւնը գտնալու համար, ոմանք ի գիտնոց բազմադարեան հնութեան մէջ թարթափելով կը հասնին մինչև Նախայրհեղեան Նահապետին Նոյի, և Նորա թոռան Գամերի անուան մէջ նմանաձայնութիւն մի հեռուէն գտնալով, աղաւաղմունք կը համարին, Քըռըմ բառը Գամեր անուան. ոմանք ալ Քիմմերեան Վրովոբէ ծագած կամ յառաջ եկած կ'ուզեն ցուցանել։ Այլք աւելի մերձաւորապէս դիտելով տեղոյն դիրքը, որովհետև լայն խրամի հետքեր դեռ ևս կը նշմարուի քաղաքին շրջ պտոյտը, (տաճկերէն հիւնտէք կամ խենտէկ) նոյն բառէն ծագած կը համարին Քըռըմ անունը. այս կարծիքէն է Ռուսաց մեծանուն պատմագիրը Քառամզին։ Անցեալ դարու գրուած ազգային մի յիշատակարան խօսելով Անեցի գաղթականաց մասին, կը յաւելու թէ Հայ գաղթականաց մի մասը Կաֆայէ դէպ արևմտեան-հարաւ գնալով բնակութիւն հաստատած են «ի Ղռիմ = լեռնամիջի». մեք այս երկրորդ բառը ոչ իբրև ածական կ'առնումք Ղռիմի. այլ իբրև թարգմանութիւն Ղռիմ, խրռրմ կամ քրռ բառին՝ որ ի թաթար լեզու բլուր կը նշանակէ։ Եւ աստի կ'ուզեմք հետևցնել որ Քըռըմ անունը, որ այժմ կը կրէ Տաւրիա կամ տաւրիական թերակղզին, ոչ ի Գամերէ, ոչ ի Քիմմերէ և կամ խրամ հիւնտէկ բառերէն ծագած կամ յառաջ եկած է,